



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՎԵՏԻՄԱՆ

ՊՐՈՄԱ



(ԹԱԴԻՌ ԸՆԴՈՒՆՈՂԻ
ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱ-
ՆՈՆՆԵՐԸ)

1929

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՎԱՆ ՀՐԱՑԱՐՎԱՐԱՎՐԵՐ



48
111
5
7



1951
1952
1953
1954


✓

Կ. ԱՎԵՏԻՍԻԳԱՆ

621.396.62

A 4482

Ժ Ա Գ Բ Ո



Հը. № 1133:

Գրասեպալվար № 2880 (բ):

Տիրաժ 3000,

Պետհըատի տուաջին տակարան Վաղարշապատում:
Պատվեր № 175:

Ա.Ա.ԴԻՌ.ԸՆԴՈՒՆԻՉԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Ամեն վոք, լերը ցանկանում ե հիմնել ռադիո-ընդունիչ, ամենից առաջ պետք ե վորոշի, թե ինչպիսի ընդունիչ պետք ե գնել, կամ ինքնուրույն պատրաստել:

Կարենը ե նկատել մի հանգամանք, վոր ներկայումս մեր ռադիո-արդյունաբերությունը շուկա լե հանել զանազան տեսակների ռադիո-ընդունիչներ և ռադիո-սարքավորումներ, սկսած ամենահասարակ ընդունիչից, վերջացրած ուժեղ բարձրախոսներով, վորոնք կարող են բավարարել մի քանի հարյուր ռադիո-ունկալիքների:

Այն հարցը, վորը վերաբերվում ե ռադիո-ընդունիչի ընտրությանը, ավելի քան հեշտ ե լուծվում այն ռադիո-սիրողի համար, վորը ավելի մոտ ե ընակվում հաղորդող ռադիո-կայանին, վորովհետև ամենաթուլլ ընդունիչն անգամ մոտիկ վայրում կարող ե ընդունել: Այս գործն ավելի ևս հեշտանում ե այն ռադիո-սիրողի համար, վորը վորոշ չափով ծանոթ ե ռադիո-տեխ-

նիկալի սկզբունքների հետ. իրոք ալդալիսի ները
հնարավորություն ունին շուկալում յեղած բազ-
մապիսի ընդունիչների միջից ընտրել իրենց ցան-
կացածը: Ինչ վերաբերվում ե հեռավոր շրջաննե-
րում կամ գլուղերում բնակվող ուաղիուսիրողնե-
րին՝ շուկալից պատահական գնած ընդունիչը
կարող ե միանգամայն անպետք լինել, ուաղիո
հաղորդող կենտրոնի հեռու լինելու պատճառով:

Պարզ ե, վոր հեռավոր տեղերից ուաղիու-
հաղորդումներն ընդունելու համար, պատրաստ-
ված ընդունիչն իր կառուցվածքով ավելի բարդ
ե լինում, քան մոտիկ տարածությունների հա-
մար պատրաստվածները. այս տեսակետից կա-
րենոր նշակակություն ունի ուաղիու-ընդունիչի
վորակի պարզեցը: Ուաղիու-ընդունիչի կառուցման
հարցում հիմնական պահանջն ե, վոր ընդունիչի
մեջ գտնվող առանձին-առանձին մասերը (ելե-
մենտները) միացված լինեն համաձայն սխեմայի,
ձիշտ և ամուր, վորպեսզի հենց սկզբից, իր
զգանությունով ուաղիու-լսողին կարողանա լիո-
վին բավարարել: Այս վերջինը կարեռ ե հեռավոր
շրջանների ուաղիուսիրողների համար, յեթե վոչ,
նրանք կարող են հանդիպել մեծ դժվարություն-
ների:

Ակներե ե, վոր ուաղիուսիրողի համար ա-
վելի հեշտ ե պարզ կազմություն և նեցող ըն-

դունիչի հետ գործ ունենալը, քան բարդ, վորով-
հետև առաջինների գործածումը մի քանի անգամ
ավելի հեշտ եւ և չեւ պահանջում հատուկ գիտե-
լիքներ։


I

1. ՌԱԴԻՈ-ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ

- 1) Թաղիո-ընդունիչը,
- 2) Հեռախոսը, դեղեկորպ (детектор) և ու-
ղիո-լապտերը (катодная лампа),
- 3) Անտենա (антенна) (ոդալին ցանցը) և
հողակցում (заземление),
- և 4) Շանթարդելը (грозовой переключатель)

2. ՌԱԴԻՈ-ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բնդունիչները լինում են լապտերավոր և
դեղեկառալին (Տես նկ. 1—2)



Նկար 1.

ա) Լապտերավոր
ընդունիչները
պատրաստվում են
սկսած մեկ լապտե-
րից մինչև չորս, վեց
և ավելին։

Թաղիո - հաղոր-
դումն ընդունելու
ժամանակ ուժեղացումը կատարվում է լապտերի

միջոցով, վորովհետև ուաղիո-ալիքները շատ ան-
նշան են լինում, ընդունիչը հնարավորություն
չի ունենում զգալ: Համաձայն լապտերների թվի
շատության ըստ այս հնարավոր ե լսել ավելի
հեռավոր վալրերից:



Նկար 2.

Սկսած 2—3 լապտեր ունեցող ապարատից
կարելի է միացնել վերարտադրող (репродуктор)
և հնարավորություն տալ լսել մի քանի տաս-
նյակ ունկընդիրների: Իսկ յերեքից պակաս լապ-
տեր ունեցող ապարատին բարձրախոս միացնել,
բարձր և պարզ լսել հնարավոր չի:

Լապտերավոր ընդունիչների համար պա-
հանջվում ենակ գործադրել ելեկտրական հոսանք
(հար հոսանք—постоянный ток) յերկու տեսակ
լարվածությամբ, ցածր և բարձր. ցածրը 4—6,
իսկ բարձրը 80 և ավել վոլտ, նայած ընդունիչի
և լապտերների տեսակներին: Այդ հոսանքը կարե-
լի յե ստանալ ակումուլյատորների կամ չոր մարտ-
կոցների (сухие батареи) միջոցով: Յերկու լար-

վածությունն ել միացվում են լապտերավոր ընդունիչին ըստ նշանակված տեղերի. ընդունիչի վրա լեղած դրական + նշանով ծալքը միացնել մարտկոցի + բևեռին, իսկ բացասականը — բացասականին:

բ) Դեղեկտորավոր ընդունիչը կըում ե ալիք անունը, վորովհետև նրա կարեոր մասերից մեկը դեղեկտորն ե — հատուկ բլուրեղից պատրաստված գործիք:

3.ԻՆՉ ՄԱՍԵՐ ՈՒՆԻ ՌԱԴԻՌ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ


ա. Հեռախոսը յեվ դեղեկտորը.

Ծնդունիչի զգայնությունը, բացի նրա մասերի (ելեմենտների) ճիշտ հաշիվներից ունիութիւնատկությունից, կախումունինակ հեռախոսի ելեկտրոմագնիաների փաթաթվածքների դիմադրության մեծությունից և մազնիաների ուժից: (Ակ. 3):



իսկ ինչ վերաբերվում է դեղեկտորին, նրա զգայնակար 3. նությունը կախումունի բյուրեղի հատկությունից: Դեղեկտորի համար կարեոր ե նրա կոնստրուկցիան, վորը դյուրացնում ե ընդունիչի լարումը. կան դեղեկտորներ, վորոնք շատ դժվարությամբ են լարվում:


Դեղեկտորը, վորպես ամենակարևոր մասերից մեկը, անհրաժեշտ է ռադիոսիրողներին մի քանի խոսքով ծանոթացնել նրա ընդհանուր կոնստրուկցիալի հետ:



Նկար 4.

Հետ շփվելով կազմում են թույլ ելեկտրական միացում: Վորովհետև բյուրեղի վոչ բոլոր կետերը ունեն զգայնություն, այսինքն չունեն դեղեկտորացման հատկություն, անհրաժեշտ է, վորը ընդհանուր կոնստրուկցիան լինի շարժական, վորպես նապափորություն լինի շարժելով գանել բյուրեղի և որածալը զսպանակի միացման կետերը. այդ նպատակով սովորաբար սրածալը-մետաղլա զսպանակը պատրաստվում է շարժական և հարմարեցվում է դեղեկտորի ծնկաձև մասում:

Դեղեկտորը իր հերթին բաղկացած է լերկու զըլիավոր մասերից. բյուրեղից և մետաղլա որածալալից (Տ. նկ. 4), կամ լերկու տարեր բյուրեղներից (Տ. նկ. 5). բյուրեղները հազիվ իրար



Նկար 5.

Ժական, վորպես նապափորություն լինի շարժելով գանել բյուրեղի և որածալը զսպանակի միացման կետերը. այդ նպատակով սովորաբար սրածալը-մետաղլա զսպանակը պատրաստվում է շարժական և հարմարեցվում է դեղեկտորի ծնկաձև մասում:

Բացի ալդ, կարևոր ե ևս, վոր դեղեկտորը
ունենա հաստատում գործողություն, այսինքն
սրածալը տեղափոխելիս ցանկացած ուղղու-
թյամբ, շարժման ժամանակ չանհարտանա ռադիո-
ալիքը:

Դեղեկտորի խրանների համար (մի զույգ
բեեռներ, վորոնք անցնում են բների մեջ) ըն-
դունիչի վրա պատրաստված բների հեռավորու-
թյունը պիտի լինի 20 միլիմետր:

թ. Դեղեկտորի մասերը.

Դեղեկտորի լավորակ բլուրեղները հետե-
լալներն են.

Բյուրեղներ

Մետաղյա սրածայր

Կապարտա փալլար (զալեն գալենիդ)	դրա մար գոր- ծածակ,	հա-	Պողպատկա նիկել
Կապարտա փալլար (առանց գալենի)	»		
Կապարտա փալլար	»		
»	»	»	Պղնձյա
»	»	»	Գրաֆիտի
			Մագնիում ժա- պավեն
Պիրիտ	»	»	Պղնձյա
»	»	»	Պողպատկա
»	»	»	Վուկա
Ցերկաթ սիլիցի	»	»	Պղնձյա
	»		Պողպատկա

Ցինկ	»	Պղնձլա
Կարբորունդ	»	{ Պողպատլա
»	»	{ Պղնձլա

Ամենագործածականն ե ցինկ-խալկոպիրիտ, կարբորունդ պիրիտ և յերկաթ-սիլիցի-պիրիտ:

Պետք ե նկատել, վոր վոչ բոլոր բյուրեղները, թեկուղ լինեն միևնույն տեսակից, հավասարաչափ զգայուն են. նույնն ել վերաբերվում ե բյուրեղի մակերեսի կետերին. մակերեսի վոչ բոլոր կետերը հավասարաչափ զգայուն են, բյուրեղի ամենազգայուն կետին մետաղլա սրածայրը միացնելու ժամանակ ստացվում ե և պարզ ուղիղ-հաղորդում:

Ամեն մի ռադիո-սիրող ռադիո-հաղորդում ընդունելու ժամանակ, յերբ նա զործադրում ե գեղեկտոր, չպետք ե մոռանա, վոր բյուրեղը պետք ե մաքրել փոշուց և այլ կեղտերից: Անհրաժեշտ ե ընդունելությունը վերջացնելուց հետո դեղեկտորը ծածկել հատուկտուփով, վորևէ պաշտպանիչով, կամ հանել ընդունիչի վրայից և պահել:

Պետք ե իմանալ, վոր ռադիո-հաղորդման ընդունելությունից հետո, յեթե ընդունիչը միացված չլինի գետնի հետ, բյուրեղը ոտմոսֆերալին, ուժեղ կայծերին յենթարկվելով, կորցնում ե իր զգայնությունը, յերբեմն ելքոլորովին ալրվում ե:

Զի թուղատրվում բլուրեղին ձեռք տալ. կա-
րող ե պատահել, վոր նրա զգալուն կետերը
կեղտութեն և զգայնութլունը թուլանաւ: Ցան-
կալի յերլուրեղը իր տեղից շարժել ունելիքով:

Տարածված այն կարծիքը, վոր իբր թե մեծ
կտորից կազմված բլուրեղով ավելի լավ ե լսվում,
քան թե փոքրով, սխալ ե. ուաղիութեխնիկան
տեսականորեն ապացուցում ե ընդհակառակը:

գ. Ինչպես գՏնել բյուրեղի զգայուն կետը.


Ցերք ուաղիուհաղորդումը բավականաչափ
լավ ե լսվում, դժվար ե նշանաբել, թե արդյոք ոդ-
տվում ենք լավ բլուրեղով և գտել ենք նրա զգալուն
կետը: Վորպեսզի այս հարցին պատասխանել,
հարկավոր ե նախորոք լարել ընդունիչը հաղոր-
դող ուաղիուկայանի ալիքի վրա և ապա գտնել
դեղեկտ. բյուրեղի զգայուն կետը, վորից հետո
փոփոխելով ընդունիչի ինքնախնդուկցիոնը, կամ
կոնդենսատորը (խտացուցիչ), մետաղա սրածայ-
րը շարժել իր տեղից և հեռացնել սկզբնա-
կան կետից, հետո փորձել գտնել բլուրեղի մակե-
րեսում մի նոր կետ, վորը պետք ե տա ավելի
լավ արդյունք: Այդ լեղանակով կարելի յե մի
քանի անգամ փոփոխել կետերը և վերջում կա-
րելի յե համոզվել, վոր բլուրեղը զգալուն ե և
բավարարում ե ուաղիուսիրողին:

4. ԱՆՏԵՆԱՆ ՑԵՎ ՀՈՂԱԿՑՈՒՄԸ

Ընդունող ռադիոսարքավորման հետ զուգահեռ հիմնական մասերից մեկն եւ անտենան և հողակցումը:

Ռադիոսիրողը, նախ քան ընդունիչի հիմնելը, պետք եւ հողս տանի անտենայի ճիշտ կառուցմանը, նրան տալով վորոշ բարձրություն:


Սովորաբար անտենան իրանից ներկայացնում եւ պղընձյա կամ բրոնզակարերից հյուսված հաղորդիչ այդ հաղորդիչը միացվում եւ կայմերի ծայրերին. վորտեղ հնարավոր չի կայմեր հիմնել, կարելի յեւ միացնել ծառերին, լեկեղեցիների գմբեթներին և գործարանների դրսի խողովակների գագաթներին:



Նկար 6.


Անտենային պետք եւ տալ հորիզոնական դիրք. մի ծայրից իջեցվում եւ ուղղահայաց մի լար, վորը միացվում եւ ընդունիչին, վորտեղ դրված եւ «Ա» տառը (Տ. նկ. 6 յեվ 6ա). կարելի յեւ

և թեքված դիրք տալ, բայց ընդունիչը պետք է
միացնել իջեցրած լարին ցածի մասից:



Նկար 6ա.


Անտենան ունի «Г» և «Т» տառերի ձևեր.
Եթե դրվում է «Г»
տառի ձևը, պետք
է հորիզոնական մա-
սը բաժանել ճիշտ
լերկու հավասար
մասերի և բաժան-
վող տեղից իջեցնել
գեղի ընդունիչը
ուղղահայց ծալը:
(Տ. 6ի. 7 և 8.):



Նկար 7.


Անտենան կալմերից մեկուսացնելու համար

գործ են ածվում հախճապակե (ֆարֆորիա) ընկուզաձև մեկուսիչներ (орешкообразные изоля-



Նկար 8.

торы). այսին մի ծալրին միացվում ե վո չպակաս 2-3-ից (Տ. նկ. 9). մեկ հատը լավ չի մեկու-




Նկար 9.

սացնում և անտենալից ստացվում ե ելեկտրո-

մագնիսական ալիքների կորուստ։ Նախ քան
անտենան միացնելը կայմերի գաղաթներին, ցան-
կալի լեռ դործադրել չուզունյա կամ լերկաթլա
ճախարակներ, վորը կհեշտացնի լարերով իջեց-
նելու բարձրացնել անտենան։


Անտենայի հորիզոնական մասի լերկարու-
թյունը սովորաբար լինում է 40—50 մետր. իսկ
տեղական պայմանները լեթե չեն թուլատրում
տալ այդ լերկարությունը, կարելի լեռ վերցնել
20—30 մետր, բայց ուղղահայց մասի ծալրին,
նախ քան միացնելը ընդունիչին, հարկավոր ե-



Նկար 10.

միացնել մեկ կծիկ մեկուսացված լար (կարելի լե-
ռեկտրական զանգի լարից), վորը կավելացնի
անտենայի ինքնախնդուկցիոնը և հնարավորու-
թյուն կտա ընդունելու լերկար ալիքավոր ուաղիո-
կալանների հաղորդումները։

Խսկ այն ռադիո-սիրողները, վորոնք դըժ-
վաշանում են գնել մեկուսացված լար և կալ-
մերի հեռավորությունն է 20—30 մետր, այս
դեպքում անտենան պետք է պատրաստել լերկու



Նկար 10 ա.

Լաբից (Տ. 6կ. 10): Մի անտենալին միացնել լեր-
կու կամ ավելի ընդունիչներ, չի կարելի. իսկ մեկ
կարմից կարելի լի կախել մի քանի անտենա-
ներ (Տ. 6կ. 10 ա):

ա. Ինչումն ե անտենայի դերը.

Նկարագրել ուղարկող ռադիո-կայանի ան-
տենան մեր ծրագրում չի մտնում, այլ միայն
ընդունող կայանների, վորոնք ներկայումս տա-
րածված են ռադիո-սիրողների ցանցում:

Շատերին հայտնի լի, վոր ուղարկող ռադիո-
կայանների ստուգիաներում դրված միկրոֆոնի
տուած արձակած հնչյունները, տարածվելով լե-
թերի մեջ, պետք է, վոր ճիշտ և շատ վորոշ


A 4487

ընդունվեն և լսվեն ընդունող ռադիո-կայաններում։ Արձակած հնչումները միկրոֆոնից սկսած մինչև ընդունիչին հասնելը կատարում են մի շաբք ելեկտրական ոլրոցեսներ և վեր են ածվում ելեկտրական տատանումների, ալիքաձև, նման ջրի ալիքներին, և ապա վեր են ածվում համար ների, վորոնք հանդես են գալ ռադիո-ընդունիչի հեռախոսի մեջ։

Ընդունող և հաղորդող ռադիո-կայանների տարածության միջև առաջացած ելեկտրոմագնիսական ալիքներն հայտնաբերելու համար պետք է ունենալ լեթերում մի վորևե հաղորդիչ լար, արդպիսին ռադիո-կառուցվածքներում, անտեսնան ե, վորը անմիջականորեն կապում ե արդ լեթերի կայանները իրար հետ և ռադիո-հաղորդման ալիքները ինդուկցում ե և ուղեարում դեպի ընդունիչ ապարատը։

բ. Հոդակցման նշանակությունը.

Ընդունող ռադիո-սարքավորման մեջ, նաև համանափանգ դեղեկտրոլալին, հողի հետ հաջող միացնելը մեծ նշանակություն ունի։ Վատ միացումը կլանում ե մեծ քանակի ռադիո-լեռանդ, վորը կարող է անցնել ընդունիչի մեջ և ավելացնելու ուժեղացնել ռադիո-հաղորդման լսելիությունը։



Ելեկտրոմագնիսական հոսանքները, վորոնք
ընդունվում են անտեխնայի միջոցով և անցնում
ընդունիչի մեջ, իր հերթին պետք ե ազատ
անցնեն դետնի մեջ կամ հակառակը:

Բայց պատահում են տեղեր, վորտեղ գե-
ւառինում ե վատ (քարոտ, չոր և այլն) և
դա բոլորուն հաղատակահարմար չի և վորոշ
չափով ել կթուլացնը ահո-ընդունելությունը:
Բացի այդ, անփորձ ուաղիռ-սթրուցիքը և ուաղիռ-
աշխատակիցները, նույնիսկ շփոթության են
հանդիսավում, նկատի չառնելով հողակցման նշա-
նակությունը, վատ լսվելու ժամանակ սկսում
են ընդունիչը քանդրաել, կամ թե քննադատել
ուաղիռ-սարքավորումը և լավ հողակցումը հնա-
րավոր ե հողի խոնավ շերտերին հասնելով
կամ ավելի լավ ե ոգտվել, յեթե ուաղիռ սար-
քավորմանը մոտ ե ջուրը, առուն, զետը, ջրհորը
և այլն:

Մուաղիռ-ընդունիչից, վորտեղ նշանակված ե
«3» տառը միացվում է պղնձյա լարը (ցանկալի
չելինի մեկուսացված) և տարվում է դեպի դուրս,
հասցնելով այն տեղին, վորտեղ ընտրված ե հո-
ղակցումը, լարի ծայրը մաքրվում ե և անազով
միացվում է մետաղյա շերտին և կամ թերթիկին.
Թերթիկը պետք ե լինի պղնձյա անազով ծածկ-
ված կամ մաքուր ցինկից:

Միացնելուց հետո շերտը վոչ պակաս մեկ
մետր խորությամբ թաղվում է հողի մեջ. իսկ
ինթե մտ և առու, գետ, ջրհոր և ալին, ուղղակի
իջեցվում է ջրի մեջ և ծածկվում հողի բարակ
շերտով:

5. ԻԱՂԻՌ-ԸՆԴՈՒՆԻՉԻ ԿԱԶՄՈՅ-ՅՈՒԽՆԲ

ա) Ինքնախնդու կարոն կոճ.

բ) Կոնդանսատոր (փոփոխական և մշտական),

գ) Վարիոչափ (вариометр)

Հիշալ մասերը գործածվում են թե լավագութերավոր և թե գեղեկարավին ընդունիչներում:

Վորպեսզի չբարկացնել ուսդիմսիրողների
գործը նամանավանդ գլուղում, այսուեղ մենք
նպատակ ունինք ծանոթացնելու գլխավորապես
այս այն ընդունիչի մասերի հետ, վորոնց հետ
ուղղիութիրող հաճախ գործ ե ունենում: Իսկ
լավտերավոր ընդունիչների կառուցվածքը ավելի
բարդ է և մասերը ունեն ավելի բարդ ձև ու
պատրաստվում են այլ հաշիվներով:

ա. Ինքնախնդուկցիոն կոճը.

Բոլոր տեսակի ընդունիչների մեջ առանց
բացառության ինքնախնդուկցիոն կոճը ամենա-
կարևոր մասն է:

Ինքնախնդուկցիոն կոճը և կոնդանսատորը

միանալով իրար հետ, կազմում են այսպես կոչված ընդունող կոնտուր, վորը հնաբավորություն ե տալիս ընդունիչը լարել վորեւ ռադիո-ալիքի վրա ու այդպիսով իրականացնել ռադիո-հաղորդման ընդունելությունը։ Գործնականում ռադիո-ազները հանդիպում են զանազան տեսակի և ձևերի ժամաներով ինքնախնդուկցիոն կոճակների, բայց սկզբունքը մնում է նույնը։

Փաթաթվածքների համար գործածվող լարը գլխավորապես լինում ե սպանձյա և առակալման մեկուսացված։ Վորպես ելեկտրոտեխնիկական որենք, լարերը պետք ե լինեն բավականաշատ հաստ, վորպեսզի պակասի լարի դիմադրությունը։ Ամենայավ մեկուսացումը հաշվում ե կրկնակի թղթով պատվածը։ Լարը արդպիսի մեկուսացումով կրնաւ նշանակվում ե ՊԵԴ։

Ավելի նուրբ պատրաստված ընդունիչներում գործադրվում ե նաև կրկնակի մետաքսյա մեկուսիչ, վորը նշանակվում ե ՊՄՁ։ Լարը, բացի թղթյա մեկուսացումից, ծածկվում ե շերտակով (սոսինձանման նյութ) կամ պարաֆինով։

Կարելի է ոգտվել մեկ շերտ թղթյա կամ մետաքսյա մեկուսացում ունեցող լարերով, վորոնք նշանակվում են ԱԲՕ և ՊՇՕ, բայց այս վերջինները կարող են ընդունիչում առաջացնել սեփական ունակություն (собственная емкость),

վորը ավելի ես կավելանա, լեռը լարը ծածկում ե շերլակով կամ պարաֆինով:

Թաղիո-ընդունիչում առաջացած սեփական ունակությունը բոլորովին ցանկալի չե, վորը վորոշ չափով ազգում ե նրա զգալուն դորձելու վրա. դրանից

խուսափելու համար, ավելի լավ ե գործադրել ինքնախնդուկցիոնը կրկնակի մեկուսացումներով, ինքնախնդուկցիոնի համար ռադիո-սիրոզները գործ են աճում 0,8 միլիմետր հաստության դանդի լար:


Ինքնախնդուկցիոն կոճերը լինում են դանազան ձևերի, դլանաձև, հարթ սողիչներով (с ползунком), և ալին (s. նկ. 11, 12):

թ. Վարիոմետր.

Վարիոմետր կոչվում է այն ինքնախնդուկցիոնը, վորը բաղկացած է միութեանց հետ կապ-



Նկար 11.




Նկար 12.

~~ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ~~

ված լերկու կոճերից. ցանկացած դեպքում կարելի է յուրաքանչյուրին առանձին-առանձին դիրք տալ, վորի շնորհիվ հավասարաչափ փոփոխվում ե ինքնաինդուկցիոնը, վորոշ սահմանակերում (Տ. Տիկ. 13):

գ. Կոնդենսատորիեր (Խտացուցիչներ).

Կոնդենսատոր կոչվում ե ընդունիչի մեջ գտնվող այն մասը, վորը իրանից ներկայացնում



Նկար 13.

է լերկու կամ մի քանի մետաղի թիթեղներ, վորոնց միջի գտնվում են ելեկտրականություն չհաղորդող շերտերը (զիելեկտրիկներ), որինակի համար ոդը, փայլարը, պարաֆինը, յուղած թուղթ, կամ տառնց յուղի և այլն: Կոնդենսատորին հաղորդվող ելեկտրական հոգանքը առաջացնում է շերտերի միջի հակառակ հոսանք—դրականից բացասական, բացասականից դրական: Կոնդենսատորների վորակը վորոշելու համար ընդունված ե համեմատել մեկը մյուսի հետ, չափանիշ ունենալով նրանց ունակությունը:


Կոնդեսատորների ունակությունը չափելու միավոր ընդունված է վարատներ և սանտիմետրներ։ Ունակության մեծությունը պարբանավորվում է նաև շերտերի մակերեսի լայնությամբ, քանակով և նրանց միջև լեղած տարածության հեռավորությամբ։

Բացի այդ, ունակությունը կախում ունի նաև թիթեղները բաժանող նյութից (դիելեկտրիկ հաստատունից)։


Կոնդենսատորների ունակությունը ավելացնելը հնարավոր է միայն մի քանի կոնդենսատորների զուգահեռ միացնելու դեպքում, ավելի փոքր ունակություն ստանալու դեպքում միացվում են հաջորդաբար։

Կարճ ալիքները ընդունելու համար ընդունված է կոնդենսատորները միացնել հաջորդաբար, իսկ յերկարը՝ զուգահեռ։

Կոնդենսատորները լինում են յերկու տեսակի, փոփոխական և մշտական։ Մշտական կոնդենսատորների դիելեկտրիկները լինում են զանազան տեսակի նյութերից, նկար 14. իսկ փոփոխականինը՝ միամիայն ողը։ Փոփոխական կոնդենսատորների շերտերից մեկը լինում



Ե շարժական, իսկ մյուսը անշարժ, յեռանկառածնածե կամ կիսաշրջան (Տ. 61. 14 և 15):




Նկար 15.

6. ԼՈՊՏԵՐԱՎՈՐ ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐ

Լապտերավոր ընդունիչները (ուժեղացուցիչները) ներքին սարքավորումներով ղեղեկառավագանվում են մի քանի առանձնահատուկ մասերով և լապտերներով։ Շատ լապտերներով և մեծ կարողությամբ ընդունիչներում դործադրվում են հատուկ դիմադրիչներ — արանսֆորմատորներ և այլ ձեի կոնդենսատորներ։

Իսկ ինչ վերաբերում է լապտերներին, ներկայումս շատ գործածական են «Միկրո»

(МИКРО) լապտերները, իերկու կամ մեկ ցանցանի
(ս. նկ. 16, 17): Մեծ կարողություն ունեցող ու-



Նկար 16.

ժեղացուցիչներում գործ են ածվում ուժեղ լապտերներ, YT-1, YT-15 և այլն տեսակների:

II

1. ՌԱԴԻՈ-ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ


Նախ սկսենք դեղեկտորալին և ապա անցնենք լապտերավոր ընդունիչների ոգտագործման ձևերին:

Ռադիո-հաղորդումը ընդունելու համար,

Նամանավանդ, յերբ անհայտ ե, թե վորտեղից
ե և ինչպիսի յերկարության ալիքով ե լսվում,
ամենից առաջ պետք ե ստուգել, չկա արդյոք
ոտմուֆերային կամ կայծակի ուժեղ պարզումներ
(разряды), ստուգելու համար շանթարգելի կոթը
մի քանի անգամ պետք ե հեռացնել և մոտեց-
նել նորից իր սկզբնական դիրքին, այդ ժամա-
նակ պետք ե նկատվեն կայծերի ճթճթոցներ.

յեթե այդպիսիները
բացակայում են, ա-
պա շանթարգելը
տեղափոխել անտե-
նային լարին, վորը
միաժամանակ միաց
ված ե և ընդունի-
չին:

Յերբ կհամոզվեք,
վոր կայծերը միան-
դամայն բացակա-
յում են, ընդունե-
լությունը հնարա-
վոր ե արդեն, կա-
րելի յե ձեռնարկել



Նկար 17.

լարման. Նախ վերցնել հեռախոսը, հաղցնել ա-
կանջներին. դեղեկտորի սրածալը նստացնել
բյուրեղի վրա, վորից հետո շարժել ինքնախ-

դուեկցիան կոճի հետ միացված կոթը, թողնելով
իր միջին դիրքում, իսկ կոնդենսատորինը շար-
ժել մի ծայրից դեպի մլուսը։ Լսելով վորեւ և
կալանի հաղորդում, կոնդենսատորը թողնել ա-
մենազգայուն դիրքում, իսկ ինքնախնդուկցիոնը
պետք եւ շարժել այս կամ այն կողմը, մինչև
գտնել ռադիո-կայանի հաղորդումը։ Արդ վեր-
ջացնելուց հետո հարկավոր եւ դեղեկտորի սրա-
ծալը իր դիրքից փոփոխել և գտնել ամենա-
զգայուն կետը բրուրեղի մակերեսի վրա։

Յերբ միաժամանակ աշխատում են և լըռ-
վում ընդունիչում լերկու ռադիո-հաղորդիչ կա-
յաններ, բայց ցանկալի չի նրանցից մեկին ու
մեկին լսել, այս դեպքում ընդունիչի գործիչ
մասերը մնում են նույն դրությանը, միմիայն
հնարավոր եւ մի կալանի հաղորդումը թուլացնել,
իսկ մլուսը ուժեղացնել ինքնախնդուկցիոնի կամ
կոնդենսատորի ունակությունը ավելացնելու կամ
պակասացնելու միջոցով։


Աշխատանքը վերջացնելուց հետո ընդունիչը
կարելի է թողնել նույն դրությամբ, միայն
շահթարգելը միացնել հողակցման «3» կոնտակ-
տի հետ։

2. ԱՎՏԵՐԱՎՈՐ ԸՆԴՈՒՆԻՉԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Նախ քան ընդունիչը միացնելը, սկզբից
պետք եւ համոզվել արդիոք կանոնավոր են լապ-

տեղները, ակումուլյատորալին և չոր ելեմենտների մարտկոցները, ընդունիչի մակերեսի վրա դժուվող մասերին միացվող կոնտակտները, և վերջապես լապտերների բևեռների բները։ Այս բոլորից հետո միացվում ե շանթարգելը ընդունիչի «Ա» կոնտակտին, հետո միացվում են 4 և ապա 80 վոլտ մարտկոցները համաձայն տվյալներին + և — բևեռները ընդունիչի համապատասխան լարերին։

Խիստ վտանգավոր ե 80 և 4 վոլտանոցների միացման տեղերը փոփոխել, արդպիսի դեպքում անմիջապես այրվում են լապտերները։ Իսկ



Նկար 18.

յեթե սխալմամբ փոփոխել + և - բևեռները, ընդունիչում վոչինչ չի լավում և կարող եք շփոթության հանդիպել (Տ. նի. 18)։

Մարտկոցների ճիշտ միացումից հետո հեռախոսը միացնել «Տ» նշանակված ըներին և ապա շատ կամաց շարժել շիկացնող ըեռատատի կոթը դեպի աջ, մինչև այն ժամանակ, երբ կսկսեք լսել բավարար չափով խշոց և շփում, այս վերջինը առացուցե, վոր ընդունիչը միացված ե ճիշտ, ըեռատատի կոթը շարժելիս մինչույն ժամանակ կլսեք, թեկուզ թուլլ, վորե և ուղիութեանի հաղորդում, բայց ըեռատատը պետք ե շարունակել շարժել դեպի աջ, մինչև վոր հաղորդումը լսվի բավարար։ Յերբ ըեռատատը շարունակում եք շարժել դեպի աջ, իսկ ուղիութեանը լսողությունը չի ուժեղանում, ուրեմն ըեռատատի լարումը պետք ե համարել վերջացած։ Դրանից հետո հարկավոր ե լարել ընդունիչի մլուս մասերը։ Նախ սկսել ընդունող կոնտուրից, շարժելով կոնտակաների տեղը, այսինքն առանձին-առանձին մասերը, մինչև վոր հաղորդման լսողությունը բավարարի ունկընդիրներին։

Պետք է ճիշեցնել մի հանդամանք, վոր յերբ ընդունիչի ընդունող կոնտուրը լարված չի տըվլալ ալիքի վրա, առաջ ե դալիս տարօրինակ վոնոց (ՅՈՒ). յերբ դա տեղի է ունենում, նշանակում ե ուղիութեանը լսվում ե, մնում ե գտնելնրա ալիքի ճիշտ լարումը, այսինքն լարել ընդունիչը ըեղունանս տվյալ ալիքի վրա։

Լսողությունը, յերբ հեռախոսում այնքան ե
ուժեղանում, վոր անհնարին և մոտեցնել ականջ-
ներին, պետք ե անմիջապես միացնել վերաբտա-
դրողը (репродуктор):

Վերաբտադրողի լարումը տրվում ե սպի-
տակ մետաղիա պտուտակով, վորը գտնվում ե
ուսպրոդուկտորի հետին մասում։ Աշխատանքը
վերջացնելուց հետո անմիջապես բեռուտատը պետք
ե շարժել դեպի ձախ, լապտերները հանգցնել և
ապա ազատել մարտկոցներից ու շանթարգելը
միացնել հողակցման հետ։


III

ՀԵՌԱԽՈՍԱԼԱՐԵՐԻ ԵՎ ԵԼԵԿՏՐՈԼԱՐԵՐԻ ՈԳ-
ՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՆՏԵՆԱՅԻ ՓՈԽԱՐԵՆ։

Այն քաղաքներում, վորտեղ գտնվում են
ուղիղո-հաղորդ կայանները, շատ տարածված ե
անտենայի փոխարեն հեռախոսի և ելեկտրոլա-
րերի ոգտագործումը։ Հեռավոր տեղերից հաղոր-
դումների ընդունելությունը կատարել նման ձե-
վով բավարար չափով անհնարին ե, թեկուզ լինի
ամենաուժեղ և բարդ սխեմայով ընդունիչը։

Այստեղ, վորտեղ գտնվում ե ուղիղո-հաղորդ
կայանը, հեռախոսի և ելեկտրոլարերի ոգտագոր-
ծումը պետք ե կատարել հետևյալ պայմաննե-
րում։

Ուաղիու-ոիրողը վոչ մի իրավունք չունի
ինքնուրուցն, առանց թուլատրութիւն, ընդունիչը
միացնելու հեռախոսայարին։ Այդ նպատակի հա-
մար պետք է գիմել տեղում հեռախոսացանցի
կալանին և հրավիրել մանտիոր։ Առանց ման-
տիորի կարելի է միացնել հեռախոսին միացվող
կապարելարին։ Իսկ ելեքտրոլարերի ոգտագործ-
ման ժամանակ այստեղ, վորտեղ ելեկտրական
լարվածությունը ավելի չե 220 վոլտից, ուաղիու-
սիրողը կարող է ընդունիչը միացնել ինքնու-




Նկար 19.

ըռւյն, բայց չի թուլատրվում ելեկտրոլարի
մեկուսացումը (շապիկը) քանդել, միացումը ան-
միջապես պետք է կատարել ուղետե Խըրանոցի
միջոցով, իսկ ծալքահեղ դեպքում լապտերի
կոթառի միջոցով (Տ. նկ. 19, 20):

Լարերը և ընդունիչը պաշտպանելու համար

ապահովիչի փոխարեն պետք է գործադրել կոնցենսատոր (մշտական), միացնելով մի ծալրով գծին, իսկ մյուսով ընդունիչին. այդպիսի կոնցենսատորներ հեռախոսալարերի համար պետք է լինի 3000 սանտիմետր ունակությամբ իսկ նրա դիելեկտրիկը պիտի գիմանա 1000 վոլտ լարվածության:



Նկար 20.

Ելեկտրոլարերի համար միանդամայն բավական ե գործադրել կոնցենսատոր 800—1500 սանտիմ. ունակության: Բայց մի շարք պայմաններից յելած, այդպիսիները ընտրվում են գործնականում:

Կոնցենսատորը այս դեպքում ծառայում է վորպես ելեկտրական ֆիլտր, նրա միջոցով լավ են անցնում միմյանց արագ կերպով հաջորդող

ելեկտրոմագնիսական հոսանքները, վորոնք կուտակվում են ելեկտրական կամ հեռախոսալարի միջև առաջացած հաղորդող ռադիո-կայանների ռադիո-ալիքներից։ Բացի դրանից, գծի և ընդունիչի միջև պետք է միացնել հեշտ հալվող ապահովիչ՝ կապարլա բարակ թելից պատրաստված¹, արդպիսի ապահովիչը հալվում է 0,95 ամպեր ուժով հոսանքից, գործադրվում է ևս 0,25 ամպերանոց, լեթե արդպիսիները հնարավոր չի ձեռքբերել, ան ժամանակ կարելի լե փոխարինել ելեկտրական լույսի համար գործածվող ապահովիչներ «MINHOON» տիպի։

IV

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՌԱԴԻՈ-ԸՆԴՈՒՆԻՉԻ ԿԱՑՄԱԿԻՑ

Ամպերի կուտակման ժամանակ՝ ողում ահոելի ուժերով առաջանում են ելեկտրական կալծեր (հոսանքներ), վորոնք անցնելիս, իրենց ճանապարհին հանդիպած բնության ամենախոշոր առարկաները, ինչպիսիներն են՝ ժայռեր, ծառեր, և այլն այրում և մոխրացնում են, հալեցնում են մետաղիա հսկա կառուցումներ և մագնիսացնում լերկաթյա զանգվածներ։

Պատահում են կալծեր, վորոնց լերկա-

¹ Վաճառվում են ելեկտրոխանություններում։


ըությունը հասնում ե մինչև մեկ կիլոմետրի, իսկ նրանցից առաջացած ելեկտրական լարվածությունը $250,000 - 500,000$ և ավել վոլտի: Յելնելով դրանից, կարելի է ասել, վոր մարդկանց կյանքի համար կայծակից առաջացած հսանքները ամենավտանգավորն են:

Կայծակից առաջացած հոսանքները, ելեկտրական հոսանքների նման, ձգտում են անցնել դեպի հողը, վորը ամենալավ հաղորդիչն ե նրանց համար: Կայծակի ժամանակ նրանցից առաջացած ելեկտրական հոսանքները, տարածվելով լեթերում, ընտրում են բարձրությունները, իրանց ճանապարհին ավելի մոտ, ինչպիսին են ռադիո-կայմերը, և նրանց միջոցով ձգտում են անցնել դեպի հողը: Ռադիո-կայմերին միացված անտենայի լարերի միջև առաջանում են կայծակի

հոսանքներ, վորոնք անմիջապես կանցնեն ռադիո-ընդունիչը միջով դեպի հողը:

Ուժեղ կայծակի հոսանքներից պաշտպանելու համար թե

Նկար 21.



ընդունիչին և թե ռադիո-աշխատակցին, անտենայի ռադիոհայաց լարի ծայրը, վորը բերվում ե մինչև ընդունիչը, նրա և հողակցման լարի միջև հիմնվում ե շանթարգել (Տ. նկ. 21):

Յերբեմն անդգուշութիւն հետևանքով շանթարգելը չեն առանձնացնում, վորի պատճառով վոչ միայն ալրվում եւ ապարատը, այլ հրդեհվում ամբողջ շենքը և կալծակնահար լինում բնակիչները:

Ծանոթ.—Ելեկտրական կամ հեռախսսալարերի ոգտագործման համար շանթարգել կարելի յեւ չգործածել:

V

ԻՆՉՊԵՍ ՍՏՈՒԳԵԼ ՌԱԴԻՈ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ,
ՅԵՐԲ ԽԱՆԴԱՐՎՈՒՄ Ե ՌԱԴԻՈ-ՀԱՂՈՐԴՄԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դեղեկտորային ընդունիչում լերը չի լսվում ուղիուհաղորդումը, ստուգումը պետք եւ սկսել նախ բոլոր միացնող տեղերից, թե ընդունիչի առանձին մասերի հետ կապված և թե անտենայի ու հողակցման:

Պատահում ե, ընդունիչին միացվող անտենայի և հողակցման լարերը, նախ քան միանալը ապարատին, լինում են կտրված, նամանավանդ չեն նկատվում, լերը լարերը լինում են մեկուսացված (շապիկով ծածկված). լեթե դա տեղի ունի, պետք եւ կտրված ծալրերը մաքրել և նորից միացնել անագով. այն դեպքում, լերը թուլ են

լինում միացումները, հարկավոր ե ամրացնել:
Կտրված ծայրերը չեթե չմիացնել անագով, այլ
միմիայն կապել, խոնավությունից կապված տե-
ղերում կառաջանան ոկսիդներ (ժանկեր) և կա-
վելացնեն ընդունիչում դիմադրությունը, վոր
զգալի չափով ազդում ե ուսդիո-հաղորդման
ընդունելության և լսողության վրա:

Ոկսիդներ առաջանում են նաև այն դեպ-
քում, յերբ անագի հետ գործածվում ե աղաթթու,
այս վերջինի փոխարեն հարկավոր ե գործածել
կանիֆոլ (խեժ):

Պատահում ե, բացի հիշալ թերություննե-
րից ընդունիչը չի գործում դետեկտորի անկա-
նոնությունից, յերբ նրա սրածայրի և բլուրեղի
միջև առաջանում են կեղտեր: Այս դեպքում
հարկավոր ե սրածայրից մոտ կես միլիմետր
մկրատով կտրել, իսկ բլուրեղի մակերեսը մաք-
րել ասեղի ծայրով:

Այդ բոլորից հետո, յերբ ընդունիչը դար-
ձյալ չի գործում, ուրեմն թերությունը գտնվում
է ընդունիչում:


Հարկավոր ե զգուշությամբ հանել պտու-
տակները և ստուգել միջի մասերը. այն դեպքում,
յերբ հնարավոր չե ինքնուրույն վերացնել, ապա
պիտի դիմել տեղում գտնվող փորձված ուսդիո-
մանագետին:

Աւժեղացուցիչ ապարատի չղործելը լինում
է. 1) մարտկոցների սխալ միացումից, այսինքն
բևեռների + և - փոփոխումից, ստուգել միա-
ցումները:

2) Ստուգել լապտերների բները և նրանց
հետ միացվող ներքին միացումները, թողից և
կեղակից մաքրել ու տալ ամուր միացում:

3) Ստուգել շիկացնող ըեռատատի լարերը և
սողիչը ու նրանց իրար հետ միացումը:

4) Ստուգել տրանսֆորմատորները, լեթե
արդյունիները ընդունիչում կան: Տրանսֆորմա-
տորը ստուգելու համար հարկավոր ե փաթաթ-
վածքներին հաջորդաբար միացնել (Տ. նկ. 29)



Նկար 22.

1,5 վոլտանոց մարտկոցը, հեռախոսը հազցնե-
լով ականջներին կատարել շփում մարտկոցի վո-
րհե բևեռի կամ փաթաթվածքի ծացը հետ.

շփման ժամանակ հեռախոսում պետք ե լսվի
թվաթվոց (պերկանու)։ Եթե այդպիսին տեղի ունի,
ուրեմն տըանսֆորմատորը կանոնավոր գործում է։

5) Ստուգել արդիոք լապտերներում շիկաց-
վող լարը չի ծոված իր գիրքից, կամ կտրված
բոլորովին։ Յեթե ստուգումից հետո պարզվեց,
վոր ընդունիչը կանոնավոր ե, այն ժամանակ
կարելի յե յենթադրել, վոր լապտերների գոր-
ծածման ժամկետը լրացել ե (կորցրել են եմի-
սիան — ութեան ժամանակ), այլևս ընդունակ չեն ու-
ժեղացնելու, հարկավոր ե փոխարինել նորերով։

Ծանոթ. — Միջին թվով «Միկրո» լապտերը
գործում է 800 ժամ. ցանկալի յե լապտերը միաց-
ման որից վըան նշանակել որը, թիվը և ժամը։

Լապտերավոր սարքավորումների կանոնավոր
գործումը կապ ունի մարտկոցների լավ պահե-
լու հետ։ Յեթե կառուցումը գործում է չոր
մարտկոցներով, հարկավոր ե խնայողաբար վե-
րաբերվել, այսինքն ընդունիչի լրման ժամա-
նակ մարտկոցները բոլորովին ազատել և պահել
չոր տեղում։ Զի թույլատրվում խոնավ և շատ
տաք սենյակում պահել, իրոք նրանք անպետ-
քանում են։

Ցանկալի յե ընդունելության ժամանակ,
յերբ հաղորդող ուաղիու կալանը հայտարարում է
ընդմիջում, հանգստություն տալ մարտկոցներին,

ալսինքն չլսել, արդպիսով խնայվում ե մարտկոց-
ների լեռանդը: Իսկակումուլլատորներ գործածե-
լիս պետք ե անմիջապես հետևել իր ժամանակին
լիցը տալու և մաքուր պահելու փոշուց և ալլ
կեղտերից: Ակումուլլատորների փոխադրումը մի
տեղից մլուսը անհրաժեշտ է շատ զգուշությամբ
կատարել. չի թուլլատրվում ուժեղ ցնցել:
Չի թուլլատրվում նաև լերկար պահել առանց
լիցքի. այն դեպքում, լերը կառուցվածքի ան-
կանոն լինելու պատճառով վորոշ ժամանակ չի
դորձում, հարկավոր ե ակումուլլատորի միջի
ծծմբաթթուն թափել—դատարկել և պահել:

VI

ՈՒՂՂԻՉ (выпрямитель)



Լալտերավոր կառուցումների չգործելու
պատճառները գլխավորապես կայանում են նրա-
նում, վոր մարտկոցները լերկար չեն դիմանում.
Լերը հնարավոր չե գործածել ակումուլլատորներ,
իսկ չոր մարտկոցները բավարարում են ընդունիչի
լալտերների պահանջներին վոչ ավել 2-3 ամ-
սից, հարց ե առաջ դալիս գտնելու հար հոսանքի
աղբյուր: Այնտեղ, վարտեղ գոյություն ունի
ելեկտրական լուս, լեթե հոսանքը փոփոխական
է, հնարավոր ե անմիջապես դարձնել — ուղղել

հար հոսանքի, հատուկ ուղղիչի միջոցով և ցածրացնելով մինչև 80 և պակաս վոլտի ու գործածել ընդունիչի համար:

Ուղղիչները գործում են հատուկ լապտերով (кенотронная лампа):

Մանոթ.— Ռադիո-սիրողները կարող են պատրաստել արդպիսի ուղղիչներ, ոգտվելով ռադիո-ժուրնալներում հայտարարված տվյալներով և սխեմաներով:

Ուղղիչները պիտակորապես պատրաստվում են ռադիո-գործարաններում. 120 վոլտ փոփոխականից իջեցնել մինչև 110 վ. հար հոսանքի, իսկ բարդ և ուժեղ կարողությամբ կառուցվածքների համար լինում ե ևս բարձր լարվածության ուղղիչներ՝ 500—1200 և ավել վոլտի:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039079

Գիր 15 կ. Ա (1¹/₄ մ.)

4487



Կ. Ավետիսյան
РАДИО
Госиздат ССР Армении
Эревань, 1929 г.
